


Հողվածի հեղինակների առաջարկով, գործարանում ներկայումս կիրառվում է էմալային ներկերի պատրաստման նոր տեխնոլոգիա: Որպես հումք օգտագործվում է Արզաբյանդի և Դիլիջանի հանքավայրերի տեղական բնական հողային ներկանյութը:

**I. Տեխնոլոգիական պրոցեսի նկարագրությունը**

ա) Պիգմենտի և կապակցող նյութի շաղվածքի պատրաստումը: Շաղվածքը պատրաստում են պիգմենտը խառնելով կապակցող նյութի՝ օլիֆի հետ, հորիզոնական շաղախող № 1 մեքենաների



Նկ. 1. Ներկերի ստացման սկզբունքային սխեման:

րում, որոնք իրենցից ներկայացնում են հենուցի վրա ամրացված երկաթե տուփեր: Խառնիչներն ունեն պտուտակաձև թևեր: Չոր պիգմենտները լցվում են ըստ քաշի, իսկ կապակցող նյութերը՝ չափիչից, ըստ ծավալի: Պիգմենտը լցնելուց հետո 15—20 րոպե խառնում են, մինչև որ այն լրիվ խառնվի կապակցվող նյութի հետ և ստացվի համասեռ զանգված:

բ) Շաղվածքի տրորումը: Տրորումն իրականացվում է եռագրտնակ ներկատրորիչ մեքենաների

ների (2) միջոցով: Պիգմենտների ավելի փոքր մասնիկներ ստանալու համար ներկատրորիչի միջով պաստայի բացթողումը իրականացվում է 1—3 րոպեի ընթացքում, նայած մասնիկների չափին: Պատրաստի պաստան մատուցվում է պրոպելերային խառնիչին (3), որտեղ նախապես լցվում է անհրաժեշտ քանակությամբ լաք: Խառնուրդը խառնվում է մինչև համասեռ զանգվածի ստացվելը և մատուցվում միագրտնակ ներկատրորիչին (5)՝ տրորելու համար:

Պատրաստի էմալը պարզեցման համար մըղվում է դեպի պահամանը: Պարզեցումը տևում է 48 ժամ: Այնուհետև ներկը մղվում է բաքի մեջ, որտեղից փոխադրվում է երկաթե տարայի մեջ՝ բեռնաբարձման համար:

**II. Պատրաստի նյութի բնութագիրը**

Ընդհանուր օգտագործման էմալային ներկերը կոմբինացված օլիֆներում տրորված պիգմենտներ են, որոնք բացվում են յուղային կամ դլիֆտայան լաքով, ավելացնելով լուծիչ սիկատիվ կամ ռայտ-սպիրտ:

Արտաքուտ ներկերը թանձր հեղուկներ են և օգտագործվում են սվաղների, փայտի, երկաթի և ալյնի նախօրոք պատրաստված մակերևույթները ծածկելու համար:

Նոր տեխնոլոգիայի առավելությունն այն է, որ ներմտծովող թանկարժեք պիգմենտները փոխարինվել են տեղական էժան բնական ներկանյութերով, որոնք չեն անդարդառնում ներկերի ԳՈՍՏ-ով նախատեսված ֆիզիկա-մեխանիկական հատկությունների վրա:

Նոր տեխնոլոգիայի ներդրման շնորհիվ, տարեկան տնտեսումը կկազմի շուրջ 1 մլն. ռուբլի:

**ԱՆԿԻՉԵԼԻ ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄՈՎ ՀԱՂՈՐԴԱԼԱՐԵՐԻ ՆՈՐ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱ**

Ն. ԲՈՒԱՎԵՆԿՈ

«Նրևակաբել» գործարանի գլխավոր տեխնոլոգ

ՊՌ, ԱՊՌ, ՊՌԳ և այլ մարկաների տեղակայման հաղորդակարների գոյություն ունեցող կոնստրուկցիաները, որոնք ունեն բամբակե կամ այլ

մանվածքից պատրաստված տողորված շրջաչյուղվածք, հեշտությամբ վառվում են ցանցի կարճ միացումների դեպքում, անկայուն են մըթ-

նորոտային ազդեցությունների նկատմամբ, քայ-  
քայվում են հանքային յուղերի և տոգորման մե-  
կուսիչ լաբերի կողմից: Իսկ օզոնի ներկայու-  
թյամբ ռետինն մեկուսացումն արագ հնանում է:

Այդ հաղորդարների պատրաստման գործող  
տեխնոլոգիան չի ապահովում հաստոցների բար-  
ձր արտադրողականությունը և դժվարացնում է  
հոսքային սիստեմի կազմակերպումը:

Այս հարցերի լուծումը հանգեցրեց պաշտպա-  
նական շրջահյուսվածք չպահանջող, անկիղբի,  
յուղակայուն և միևնույն կայուն մեկուսացումով  
հաղորդարների նոր կոնստրուկցիայի մշակ-  
մանը<sup>1</sup>:

Հաղորդարների անկիղբի մեկուսացման հար-  
ցի հաջող լուծման դեպքում անընդհատ վուլկա-  
նացման ազդեցություններում հաղորդարների մե-  
կուսացումը թույլ կետ կազմակերպել նրանց  
հոսքային թողարկումը:

Անկիղբի ռետինն մեկուսիչ խառնուրդների  
ընտրության հիմքում դրված էր «Նաիրիտ» կաու-  
չուկի կիրառությամբ մի ռեցեպտուրա: Նաիրիտի  
առանձնահատկությունները՝ մեխանիկական ամ-  
րությունը, միևնույն կայունությունը, յուղակա-  
յունությունը, անկիղբիությունը և օզոնակայու-  
նությունը մի կողմից, և մաքուր նաիրիտի ոչ  
բավականաչափ լավ էլեկտրական բնութագրերը  
( $\rho_{20} = 3 \cdot 10^{11}$  օհմ/սմ) բնական կաուչուկի համեմա-  
տությամբ ( $\rho = 3 \div 4 \cdot 10^{14-15}$  օհմ/սմ) մյուս կողմից,  
պահանջեցին կազմել մի հատուկ ռեցեպտուրա, որն  
ապահովում է մեկուսացման բավարար էլեկտրա-  
կան ամրությունը:

Աշխատանքի առաջին էտապում որոշվել էր  
մշակել մի ռեցեպտուրա, որն ապահովում է ռե-  
տինն խառնուրդների բնութագրերը՝ ՌՏԻ—3-ից  
ոչ ցածր, ըստ էլեկտրական ցուցանիշների՝  
ՌՇՆ-ից ոչ ցածր և ըստ ֆիզիկա-մեխանիկական  
ցուցանիշների՝ ԳՈՍՍ 2068—54-ին համապա-  
տասխան:

Օգտագործելով նաիրիտային մեկուսիչ ռետին-  
ների գծով 1950—1955 թ.թ. կատարված աշ-  
խատանքների նյութերը, ռեցեպտուրայի հիմքում

<sup>1</sup> Հաղորդարների նոր կոնստրուկցիա ստեղծելուն մաս-  
նակցություն են ցույց տվել Վերանկարել գործարանի տեխ-  
նիկական բաժնի աշխատողներ՝ Ս. Հակոբջանյանը, Վ. Միրի-  
մանյանը, լաբորատորիայի աշխատակիցներ՝ Մ. Հովհաննիս-  
յանը, Ե. Քալանթարյանը և ցեխերի աշխատողներ՝ Ս. Ղա-  
ղախեցյանը, Լ. Մանուկյանը և Ս. Ավագյանը:

խառնուրդի համար դրվել էր Պաիրիտ «Ա»-ն՝  
30—35% քանակությամբ: Այդ ռետինի համար  
իրևե լցանյութեր ընտրված էին տալին ու կա-  
վիճը: Կաուչին կիրառությունը մերժվել էր, քա-  
նի որ կաուչին պարունակող ռետինի արագ խո-  
նավակլանումը (նախկինում անցկացրած աշխա-  
տանքների արդյունքների համաձայն) միշտ վատ-  
թարացնում է էլեկտրական ցուցանիշները:

1951 թվականին գործարանում սիլիկատի,  
մոնոսիլիկատի և նաիրիտի կիրառությամբ կա-  
տարվել են մեկուսիչ ռետինների պատրաստման  
աշխատանքները: Այդ ռետինների էլեկտրական  
բնութագրերը և խոնավթափանցելիությունը ըստ  
ամենալինի բավարար էին՝  $\rho_{20}(\text{մեքլ. շուրջ}) =$   
 $= 1 \cdot 10^{13}$  օհմ/սմ: Սակայն սիլիկատի ղեկիցիտայ-  
նության պատճառով այդ ռետինների տեխնոլո-  
գիան չսահմանվեց:

Արտադրական ռետինների առաջին վարիան-  
տի վերջնական ընտրության համար մշակվեցին  
նաիրիտային մեկուսիչ ռետինի 8 ռեցեպտու-  
րանք փորձարկվեցին ԱՆՎ—115 ազդեցատով:

Տարբեր էլեկտրական բնութագրերի լավա-  
գույն համադրության և խառնուրդների խոնա-  
վակայունության որոշման համար, թիթեղների  
ձևով ռետինների նմուշները մինչև 30 օր պահ-  
վել են ջրի մեջ՝ նորմալ ջերմաստիճանում:

Ստուգվել են նաև խառնուրդների ֆիզիկա-  
մեխանիկական բնութագրերը և նրանց տեխնո-  
լոգիականությունը ԱՆՎ—115 ազդեցատով:

№ 1 աղյուսակում բերված փորձարկման տրվ-  
յալների քննարկումը ցույց է տալիս, որ նմուշ-  
ներն իրենց էլեկտրական և ֆիզիկա-մեխանիկա-  
կան ցուցանիշներով համապատասխանում են  
ՌՏԻ—3 տիպի ռետինին, իսկ նրանց գերակշռող  
մասն ունի նույնպիսի մեխանիկական ցուցանիշ-  
ներ, ինչպիսիք և ՌՇՆ լցանյութները:

Սակայն պատրաստման ժամանակ խառնուրդ-  
ները տարբեր ձևով են իրենց պահում: Տարբեր է  
նաև մեկուսացման մակերևույթը շրջամասմաման  
դեպքում: Շրջամասմելիս օգտագործվել են 1 և  
2 նկարներում պատկերված դռներն<sup>1</sup> ու մատ-  
րիցաները:

Ինչպես փորձը ցույց է տվել, ԱՊՊՈՆ հարթ



<sup>1</sup> Դռներ սնամեջ կամ հոծ մետաղյա միջուկ է, որի վրա  
կատարվում է ռետինն շինվածքների կոնֆեկցիան (հավա-  
քումն ու կպցնումը) և վուլկանացումը:

Նախիթի հիման վրա պատրաստված մեկուսիչ ռետինների էլեկտրական և ֆիզիկա-մեխանիկական բնութագրերը

№ ը/կ	Բնութագրի անվանումը	Ռետինե խոռոչների մարկաները							
		ՆՊ-35 I	ՆՊ-35 II	ՆՊ-35 III	ՆՊ-35 IV	ՆՊ-35 V	ՆՊ-35 VI	ՆՊ-53 VII	ՆՊ-35 VIII
1.	Պլաստիկություն . . . . .	0,53	0,54	0,57	0,58	0,54	0,56	0,47	0,67
2.	Պզման ամրություն . . . . .	48,1	67,2	60,5	55,0	55,3	53,6	61,5	60,3
3.	Հարաբերական երկարացում	330	690	495	660	590	510	720	720
4.	Մնացորդային երկարացում	63,0	81,0	46,0	65	69	66	69	60
5.	ρ մինչև ջուրը օհմ/սմ . . .	2,9.10 <sup>13</sup>	1,6.10 <sup>13</sup>	1,7.10 <sup>13</sup>	1,4.10 <sup>13</sup>	1,4.10 <sup>13</sup>	1,0.10 <sup>13</sup>	1,2.10 <sup>13</sup>	5,8.10 <sup>13</sup>
6.	ρ 24 ժամ ջրում մալուց հետո օհմ/սմ . . . . .	3,4.10 <sup>12</sup>	1,2.10 <sup>11</sup>	1,1.10 <sup>11</sup>		1,6.10 <sup>11</sup>	1,3.10 <sup>11</sup>	9,6.10 <sup>11</sup>	1.10 <sup>12</sup>
7.	ρ 7 օրից հետո օհմ/սմ . . .	2,2.10 <sup>11</sup>	1,3.10 <sup>11</sup>	6,4.10 <sup>10</sup>		1,4.10 <sup>11</sup>	8,7.10 <sup>10</sup>	1.8.10 <sup>11</sup>	8.10 <sup>11</sup>
8.	ρ 15 օրից հետո օհմ/սմ . .	1,7.10 <sup>11</sup>	8.10 <sup>10</sup>	—		1,6.10 <sup>11</sup>	1,2.10 <sup>10</sup>	7,7.10 <sup>10</sup>	6,4.10 <sup>11</sup>
9.	ρ 30 օր ջրում մալուց հետո օհմ/սմ . . . . .	13.10 <sup>11</sup>	5,9.10 <sup>10</sup>	—		5,6.10 <sup>10</sup>	—	3.10 <sup>10</sup>	2.10 <sup>10</sup>
10.	Ս ծակմ. մինչև ջուրը կվ . .	23,6	19,2	19,6		18,3	27,6	14,9	18,0
11.	Ս ծակմ. 24 ժամ ջրում մալուց հետո կվ . . . .	22,9	22,0	22,0		—	—	—	—
12.	Նույնը 7 օրից հետո . . . . .	—	—	11,6		—	—	—	—
13.	Նույնը 15 օրից հետո . . . .	14,0	—	—		—	—	—	—

120 °C-ի զեպրում 4 օրվա ընթացքում խոռոչների հնացման փորձարկումը հաստատել է նրանց շերտակալունությունը:

Հաղորդալարը պատրաստելիս ամենադժվար մասը հանրիսանում է 1,5 մմ հաստությամբ շիդերի միջև գտնվող ճկամրջակը: Հենց այդ կամրջակում էլ տրոշվում է ԱՊՊՈՆ—2×2,5 մմ<sup>2</sup> հաղորդարների շրջամամլման փոքր արագությունը (30 մ/րոպե), քանի որ ԱՊՊՈՆ—4 մմ<sup>2</sup> հաղորդալար պատրաստելիս, երբ կիրառվել է



3	5,0	18	10,3	15,3	
2	4,6	18,40	9,8	14,3	
1	4,2	19,20	9,3	13,4	
№ ը/կ		α°	Ա	Բ	

Նկ. 2. Անվ—1 № 1 ագրեգատի մատրիցան ԱՊՊՈՆ—380լ համար:

18°	13,2	2,9	10,3	15,3	5,1
18°40	12,2	2,4	9,8	14,3	4,5
19°20	11,2	1,9	9,3	13,4	4,0
α°	К	ψС	Ա	Բ	α

Նկ. 1. Անվ—1 № 1 ագրեգատի դռներ ԱՊՊՈՆ 380լ համար:

նույն ռետինը, շրջամամլման արագությունը հասել է մինչև 80—100 մ/րոպե: Գործիքի հետագա կատարելագործումը չնչին չափով մեծացրել է շրջամամլման արագությունը: Գործիքի կոնֆիգուրացիայի փոփոխություն չի կատարվել, քանի

Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Կ 2

Նաիրիտի հիման վրա պատրաստված որոշ մեկուսիչ խառնուրդների էլեկտրական բնութագրեր

№ ը/կ	Բնութագրի անվանում	Նաիրիտ «Բէ» *	Նաիրիտ «Մ» *	Նաիրիտ «Ա» 30 <sub>0</sub>   <sup>0</sup> -անոց «Ա» սիլիկա- ժելով (մշակված)
1.	Ր մինչև ջուրը օճմ/սմ	2,4.10 <sup>11</sup>	3,3.10 <sup>11</sup>	1,3.10 <sup>13</sup>
2.	Ր 24 ժամ ջրում մը- նալուց հետո օճմ/սմ	3.10 <sup>10</sup>	6,4.10 <sup>10</sup>	3,2.10 <sup>12</sup>
3.	Ր 7 օր ջրում մը- նալուց հետո օճմ/սմ	4.10 <sup>10</sup>	4,2.10 <sup>10</sup>	3,0.10 <sup>13</sup>
4.	Ս ծակմ. (մինչև ջուրը) կվ . . .	26,8	21,3	17
5.	Ս ծակմ. 24 ժամ ջրում մնալուց հետո կվ . . . .	19,0	19,2	15,0

\* Փորձարկումները տարվել են Ս. Մ. Կիրովի անվան գործարանում պատրաստված<sup>ժ</sup> 1մմ ± 10<sup>0</sup>/0 հաստության և 120×120 մմ չափի թիթեղիկներով:

որ դա կվատթարացնեն մոնիտորի պայմանները:

Նաիրիտի տարբեր տեսակի ազդեցությունը անկիզբի խառնուրդների էլեկտրական բնութագրերի վրա որոշելու համար, Ս. Մ. Կիրովի անվան գործարանի լաբորատորիայում պատրաստվել էր էլեկտրոլիտներ ըզարդանակող նաիրիտ: «Ա» սերիական նաիրիտի և «Բէ» նաիրիտի 1 մմ

հաստությամբ նմուշները 7 օրվա ընթացքում պահվել են ջրում: Բացի դրանից, պատրաստվել է մի խառնուրդ, որտեղ կիրառվել է բարձր դիսպերսային սիլիկատի և «Ա» սերիական նաիրիտ:

Փորձարկման տվյալները բերված են № 2 աղյուսակում: Այդ տվյալների համաձայն, նաիրիտի երկու տեսակների համար էլ էլեկտրական բնութագրերի մեջ ոչ մի տարբերություն չի նշկատվում:

Առավել հետաքրքիր տվյալներ է տալիս սիլիկատելով նաիրիտ «Ա»-ն: Նմուշները ջրի մեջ 30 օր պահելու ընթացքում մեծություներ բարձր է մնում:

Հաղորդարարների էլեկտրական բնութագրերի և նրանց խոնավակալունություն հետազատության համար պատրաստվել են ԱՊՊՌՆ-ի և ԱՊՌՆ-ի մի շարք նմուշներ, որոնք գտնվել են ջրի մեջ նույնպես 30 օրվա ընթացքում:

Այդ հաղորդարարների բնութագրերը բերված են № 3 աղյուսակում:

Ստացված արդյունքների հիման վրա կազմվել են կորագծեր, որոնք ցույց են տալիս ծակման լարման կախումը ջրում տարբեր հաղորդարների գտնվելու ժամանակ (նկ. 3), և կորագծեր, որոնք ցույց են տալիս ծակման լարման մեծությամբ կախումը անկիզբի մեկուսացման

Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Կ 3

Անկիզբի մեկուսացման կիրառությամբ պատրաստված հաղորդարների էլեկտրական բնութագրեր\*  
(Փորձարկումների ժամանակ ջրապատոզ միջավայրի ջերմաստիճանը՝ 20 °C)


№ ը/կ	Չափված բնութագրերը	Շինվածքների անվանումը					
		ԱՊՊՌՆ 2×4 մմ <sup>2</sup>	ԱՊՊՌՆ 2×2,5 մմ <sup>2</sup>	ԱՊՌՆ 4 մմ <sup>2</sup>	ԱՊՊՌՆ 2×2,5 մմ <sup>2</sup>	ԱՊՌՆ 10 մմ <sup>2</sup>	ԱՊՌՆ** 2,5 մմ <sup>2</sup>
1.	Մեկուսիչի հաստությունը մմ-ով . . .	1,6	1,2	0,7	1,5	1,0	1,0
2.	Ս ծակմ. կվ-ով (մինչև ջուրը) . . . .	26,0—25,2	16,0—15,9	10,2—10,0	26,2—25,0	18,0—19,0	13,7
3.	Ս ծակմ. կվ-ով 72 ժամ ջրում մնա- լուց հետո . . . . .	20,0—20,0	12,8—13,4	9,0	22,4	12,0—11	—
4.	Նույնը 6 օրից հետո . . . . .	21,0—21,0	—	7,6	—	10,0	—
5.	Նույնը 30 օրից հետո . . . . .	14,8—25	9,0	5,6	—	7,6—8,4	6,2
6.	Ր (մինչև ջուրը) օճմ/սմ . . . . .	—	—	9,4—10 <sup>7</sup>	—	8.10 <sup>9</sup>	—
7.	Ր մեկուսիչ (30 օրից հետո) օճմ/սմ . .	1,6.10 <sup>7</sup>	—	4.10 <sup>7</sup>	—	2,5.10 <sup>9</sup>	—
8.	R պղնձի՝ մինչև թերմոստատը օճմ . .	—	—	—	0,0348	—	—
9.	R պղնձի (20 օրվա ընթացքում 100° C ջերմաստիճանի տակ թեր- մոստատում մնալուց հետո) օճմ . . .	—	—	—	0,0349	—	—

Մանրորոշում. \* Մակման լարումները որոշելիս վերցվել են շինվածքների երկուական նմուշներ, որոնցից հանված են երեքական կետեր:

\*\* SUՇ-30 Ա ռետինից մեկուսիչ ստանալու համար կիրառվել է Պետլյանի միասնական ռեցեպտուրան:


հաստութունից՝ ջրում նմուշների տարբեր ժամանակ գտնվելու դեպքում (նկ. 4):

Այդ կորագծերի դիտումը ցույց է տալիս, որ կորի թեքությունը ԱՊՌ—10 5008 նորմալ տեղա-



Նկ. 3. Անկիզելի ռետինից տարբեր հաստության պտրաստված մեկուսացումով հաղորդալարերի էլեկտրական ամրությունը, մինչև ջրի մեջ ընկղմելը և ջրի մեջ ընկղմելուց հետո:

1. Մինչև ջրի մեջ ընկղմելը, 2. Ջրում 30 օր գտնվելուց հետո:



Նկ. 4. Անկիզելի մեկուսացումով հաղորդալարերի էլեկտրական ամրությունը, նայած 20°C-ի դեպքում ջրում գտնվելու ժամանակին:

Մեկուսացման հաստությունը՝ 1.  $\delta = 1,6$  մմ., 2.  $\delta = 1,2$  մմ., 3.  $\delta = 0,7$  մմ.:

կայման հաղորդալարերի և ԱՊՌ—4 մմ<sup>2</sup> հաղորդալարի համար, միանգամայն նույնն են:

Մակման լարման իջեցման գործակիցները ԱՊՌ—10 մմ<sup>2</sup>, ԱՊՌ—4 մմ<sup>2</sup>, ԱՊՌ—2,5 մմ<sup>2</sup> և ԱՊՌ—2×2,5 մմ<sup>2</sup> հաղորդալարերի համար գործնականորեն իրարից չեն տարբերվում: Այդ հաստատվում է № 4 աղյուսակի տվյալներով:

Այս աղյուսակը վկայում է ընտրված նմուշների բարձր խտնամակայունության մասին:

Ստացված տվյալները հնարավորություն տվեցին ընտրել մեկուսիչի հաստությունը՝ սվաղի

տակ տեղադրվող ԱՊՌ-ն հաղորդալարերի կառուցվածքի համար, և ԱՊՌ-ն հաղորդալարերի համար, որոնք անցկացվում են գլանիկների վրայով:

Ընդունելով, որ անկիզելի մեկուսացումով հաղորդալարերի սկզբնական էլեկտրական ամրությունը չպետք է ԱՊՌ—500 հաղորդալարերի էլեկտրական ամրության մեծությունից ցածր լի-

Աղյուսակ 4

Շինվածքների անվանումը	Մ ծակմ. (մինչև 2 ջրը) կվ		Մ ծակմ. (72 ժամ ջրում մնալուց հետո) կվ		Մ ծակմ. (30 օր ջրում մնալուց հետո) կվ	
	U	K	U	K	U	K
ԱՊՌ—10 500 վ	18	1	13	0,67	8,0	0,44
ԱՊՌ—2×4 մմ <sup>2</sup>	10	1	9	0,9	5,6	0,56
ԱՊՌ—2,5 մմ <sup>2</sup>	13,7	1	—	—	6,2	0,48
ԱՊՌ—2×2,5 մմ <sup>2</sup>	16,0	1	12,8	—	9,0	0,56

նի և ղգալիորեն գերազանցի ՊՌ-ի շնունների մեկուսացումից, 3 և 4 նկարների կորագծերի համաձայն գտնում ենք, որ ԱՊՌ-ն նոր հաղորդալարերի մեկուսացման հաստությունը պետք է լինի 1,1—1,2 մմ:

Նոր հաղորդալարերի կոնստրուկցիայի համար մեկուսացման լայնությունը, հաշվի առնելով տեխնոլոգիական գործոնները, սահմանվում է (շրջամամլման անհավասարաչափությունը  $\pm 0,2$  մմ):

ԱՊՌ—1,2 մմ բոլոր կտրվածքների համար:

ԱՊՌ—500 1,1 և 2,5 մմ, նայած հաղորդալարի կտրվածքին:

Բացի դրանից, հաղորդալարերի փորձարկման ժամանակ ստուգվել են պղնձի շղերով հաղորդալարերը, որոնք մեկուսացված են նախիտային անկիզելի խառնուրդով: Անվ ագրեթատով շրջամամլելու ժամանակ նկատվել է, որ ծծմբային ռետին կիրառելիս պղնձի շիղը ծածկվում է մուգ փառով: Այս դեպքում հարց է ծագում, թե արագորեն չի աճում արդյոք պղնձի վրա գտնվող

կորոզիային շերտի խորութիւնը: Դրա համար ԱՊՊՌ հաղորդալարերի նմուշները 20 օրով տեղավորել են թերմոստատում՝ 100°C ջերմութեան

տակ: Նմուշների տաքացումից առաջ չափվել է ջրի դիմադրութիւնը, որը վերահսկվել է յուրաքանչյուր 5 օրը մեկ անգամ:

Չափումները կատարվել են մշտական հոսանքի կրկնակի կամ ըջակով երկու ջրերի հաջորդական միացման ժամանակ: 20 օրվա ընթացքում պղնձի ջրի օհմային դիմադրութեան ոչ մի փոփոխութիւն գործնականորեն չի հայտնաբերվել:

Կատարված աշխատանքների հիման վրա որոշվել է թողարկել ԱՊՊՌ— $2 \times 2,5$  և  $2 \times 4$  մմ<sup>2</sup> հաղորդալարերի փորձնական պարտիան՝ 500 կմ քանակութեամբ: Այդ նպատակով ԱՊՊՌ հաղորդալարերի համար կազմված են ժամանակավոր տեխնիկական պայմաններ և կոնստրուկցիաներ (աղյուսակ № 5):

Բացի դրանից, ԱՊՊՌ—500, ՊՌՆ—500 և ՊՌԳՆ—500 վ. հաղորդալարերի համար մշակված է տեխնիկական պայմանների և կառուցվածքների նախագիծը:

Աղյուսակ 5

Կոնստրուկցիա № 4/58

ԱՊՊՌ—380 մաքայի տեղակայման երկրի հաղորդալար՝ անկիզբի ռեֆինից պատրաստված մեկուսացում

№ ը/զ	Չափերի թիվը և նոմենալ կտրվածքը մմ <sup>2</sup> -ով	Չափերը մմ-ով			Նյութերի կշիռը կգ/կմ-ով	Մանրամասն			Մանրամասն
		Չափ կոնստրուկցիան		Ներքին ջրի տեղադրված են գույքահաշիւ և շրջամալված են ՆԻ-35 ռեֆինով: Արտաքին չափերը՝ հաշվի առնելով բարավորը		Ալյումինիում	Մեկուսիչ նյութի կշիռը 1,64	Հաշվարկային կշիռը կգ/կմ-ով	
		ալյումինի մետաղալար	արամազիթ						
1.	$2 \times 2,5$	1	1,76	1,76	4,2.13,4	13,12	55	68	1. Բարավորի լայնութիւնը 5 մմ է և հաստութիւնը՝ 1,5 մմ:
2.	$2 \times 4,0$	1	2,24	2,24	4,6.14,3	21,2	65	86	2. Մեկուսիչ շառավղային հաստութիւնը 1,2 մմ է:
3.	$2 \times 6,0$	1	2,73	2,73	5,1.15,3	31,6	85	117	3. Մետաղալար 2,5 մմ <sup>2</sup> կտրուկ, ԱՏ մաքայի: 4. Մետաղալար 4 և 6 մմ <sup>2</sup> փոփոկ, ԱՄ մաքայի:

Դոնավոր թելի և № 40/1 բամբակի մանվածքի (կապույտ և սև) ծախսը՝ 0,06 կգ/կմ: